

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ

Մարգարիտ Աճեմյան-Ահներթ, ԴՌԱՆ ԹԱԿՈՅԸ: Դամփորդություն Հայոց
ցեղասպանության խավարի միջով, Եր., Հայ օգնության ֆոնդ,
2009,-226 էջ:

Անցած տարեվերջին Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) հովանավորությամբ Երևանում լույս տեսավ Մարգարիտ Աճեմյան-Ահներթի «Դռան թակոցը»¹ գրքի հայերեն թարգմանությունը (թարգմանիչ՝ Մարինե Բազանա):

Մեծ եղեռնի ականատեսի վկայությունը հանդիսացող այս հուշագրությունը 20-րդ դարի 20-ական թվականներից հետո Սփյուռքում ձևավորված ցեղասպանության գրականության նորոյա դրսևորումն է: Այն կառուցված է սյուժետային երկու գծերի զուգահեռ զարգացմամբ: Մեկը հեղինակի մոր՝ 1900թ. պատմական Հայաստանի Ամասիա քաղաքում ծնված Եսթեր Միներաճյանի հուշերն են 1915թ. արհավիրքի և դրա պատճառած անլուր տառապանքների մասին, մյուսը դստեր՝ Մարգարիտ Աճեմյան-Ահներթի մեկնաբանություններն ու անդրադարձն է անցյալի այդ դառնաղետ իրադարձությանը: Գրքի գլուխները նույնպես հերթագայում են մեկը մյուսին՝ նույն հաջորդականությամբ: Նախաբանում Մարգարիտ Աճեմյան-Ահներթն այդ մասին գրում է. «Պատմիչը նա էր. ես գրագիրն էի: Սա մեր պատմությունն է՝ գրված միասին»²:

Գիրքը³ պայմանականորեն կարելի է բաժանել 3 մասի. նախաեղեռնյան շրջան, բուն գաղթն ու հայ գաղթականներին պատուհասած դժին ճակատագիրը և վերապրողի կյանքի հետագա տարիները: Դրանցից առաջին երկուսը տրամագծորեն հակառակ աշխարհներ են ներկայացնում: Առաջինում Եսթերի

1 Տե՛ս Margaret Ajemian Ahnert, The Knock at the Door: A Journey Through the Darkness of the Armenian Genocide, Beaufort Books, New York, 2007.

2 Մարգարիտ Աճեմյան-Ահներթ, Դռան թակոցը, Եր., 2009, էջ XIII:

3 «Դռան թակոցը» Մարգարիտ Աճեմյան-Ահներթի առաջին գիրքն է: Նա ծնվել է Նյու Յորքում, սովորել Գոդարդ քոլեջում, ապա ավարտել Գաուչեր համալսարանը՝ ստանալով կերպարվեստի մագիստրոսի կոչում: Երկար տարիներ զբաղվել է հեռուստատեսային փաստագրական ֆիլմերի արտադրությամբ, միաժամանակ արվեստի պատմություն է դասավանդել դպրոցներում, ինչպես նաև դասախոսել Նյու Յորքի Մետրոպոլիտեն և Ֆիլադելֆիայի արվեստի թանգարաններում: Գիրքն անգլերեն լույս է տեսել 2007թ. ԱՄՆ-ում հեղինակին բերելով Մարդասիրական մրցանակ եւ արժանանալով տարվա «ԱՄՆ գրքի նորությունների» «Լավագույն գիրք» կոչման: Այն միաժամանակ հռչակվել է 2008թ. Նյու Յորքի Գրքի տոնավաճառի հաղթող՝ «Լավագույն պատմական հուշագրություն» անվանակարգում:

մանկության տարիների (1900-1915թթ.) նկարագրությունն է: Ճիշտ է, ի ծնե նա դժբախտ է եղել (մայրը մահացել է ծննդաբերելիս), սակայն աղջնակի կյանքի վաղ տարիներն ընդհանուր առմամբ երջանիկ, ավելին՝ հովվերգական բնույթ են ունեցել: Ամասիան, ամբողջովին թաղված կանաչի ու պտղատու այգիների մեջ, դեռահաս աղջկան երկրային դրախտ էր պատկերանում: Պոնտական լեռների հարավային ստորոտին, գեղատեսիլ Իրիս գետի ափերին տարածված հայկական այդ բնակավայրը եղել է Սեբաստիա նահանգի 7 գավառներից մեկի վարչական կենտրոնը: Առաջին աշխարհամարտի նախօրեին Սեբաստիան հայառած նահանգ էր. հարյուրավոր գյուղերից բացի հայերը մեծ թիվ էին կազմում Սեբաստիա (Սվազ), Ամասիա, Եվրոկիա (Թոխաթ), Շապին Գարահիսար և Մարզվան քաղաքներում: Ծննդավայր Ամասիային, վերջինիս կենցաղին, սովորություններին ու տոներին (Մուրբ Չատիկ, Վարդավառ և այլն) նվիրված էջերն իսկական հանրագիտարան են: Փոքրիկ Եսթերը նույնիսկ ամենաչար երագում չէր կարող տեսնել այն մղձավանջային օրերը, որոնք պիտի հաջորդեին իր մանկության ու վաղ պատանեկության տարիներին:

1915թ. հունիսի 15-ին հրապարակվում է Ամասիայի հայերի տեղահանության կառավարական հրահանգը: Հունիսի 20-ից սկսած քաղաքից բռնի տեղահանվող հայ գաղթականների առաջին խմբերի մեջ էր նաև 15-ամյա Եսթեր Սիներաճյանն իր հարազատների հետ: Նրանց տառապանքների ու չարչարանաց պատմությունն ընթերցվում է ցավ ի սիրտ և արցունք ի աչք: Վայրի երևակայություն ունեցող մեկն անգամ անգոր է նկարագրելու այն ամենը, ինչի միջով անցնում է 15-ամյա հայուհին: Աքսորի ճամփաներից ու մահվան երթից նրա պատմած իրապատում դեպքերը, Գանիել Վարուժանի բնորոշմամբ՝ «տաք մոխիրի պես» են թափվում ընթերցողի գլխին: Գրանք ամենևին էլ խելացնոր տեսիլներ չեն, այլ դառն իրականություն:

Եսթերը պատմում, իսկ Մարգարիտ Աճեմյանը մեզ է փոխանցում այդ լլկանքների սահմուկեցուցիչ պատկերները: Գրանք ֆիլմի դիպաշարի նման անցնում են ընթերցողի հայացքի առջևով: Կարծես հուզառատ և ասասարսուռ տեսարաններով լի շարժանկար ես դիտում՝ մի կողմից արժանահավատ, մյուս կողմից՝ անհավատալի: Սեբաստիայի նահանգի հարյուր հազարավոր հայերից ցեղասպանությունից փրկվել է ընդամենը 16 800 մարդ⁴:

Եսթերը մահվան քարավանների երթը համեմատում է դեպի դժոխք տանող ճանապարհի հետ: Նա, իհարկե, շատ է փորձել մոռանալ այդ ամենը: «Մոռցի՛ր» բառը հրամայականի պես է հնչել բոլոր վերապրողների համար: Ծննդավայրի ավերի և հարազատների մահվան հուշերը, սակայն, ուղեկցել են նրան հետագա ողջ կյանքում: Եղեռնի գեհենից հրաշքով փրկված հայուհին, փախչելով Ամերիկա, մտովի ապրել է անցյալի իր հիշատակների հետ: Ամեն ինչի համեմատության եզրն ու գնահատման չափանիշը նրա համար հայրենի բնաշխարհն է եղել. ծաղիկ լինի թե փուշ, երջանիկ ակնթարթներ թե դժվարին պահեր՝ բոլորի մասին նրա դատումների սկիզբն ու ավարտը Ամասիան է, հայրենի եզերքը:

Գրքի հերոսուհու՝ Եսթերի համոզմամբ բոլորը պիտի իմանան, թե ինքն ու իր նման հարյուր հազարավորներն ինչերի միջով են անցել: Նա իր մտավախությունը բազմիցս է հայտնել դատերը. «Երբ մեռնեմ, ճշմարտությունն ինձ

4 Տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, Եր., 1996, էջ 408:

հետ կմեռնի»⁵: Եվ հուշերի այս գրքով Մարգարիտ Աճեմյանն ի չիք է դարձրել այդ մտավախությունը՝ գրական հուշարձան կանգնեցնելով ոչ միայն իր տառապած մորը, այլև պատմական ճշմարտությանը: Եսթերն ունի Մեծ եղեռնի պատճառների իր բացատրությունը. «Թուրքերը նախանձում էին մեզ, պատմում է նա, Մենք ունեինք ամենալավ ու բերրի հողերը և լավագույն տնտեսությունը»⁶: Ասվածը միանգամայն համահունչ է Արնոլդ Թոյնբիի հետևյալ դիտարկմանը. «... Իրենց տաղանդի և խառնվածքի շնորհիվ հայերն իրենց ձեռքն էին վերցրել Թուրքիայի արդյունաբերության, առևտրի, ֆինանսների և մտավոր կարողություններ պահանջող աշխատանքների մեծ մասը»⁷:

«Դռան թակոցը», սակայն, սուկ ցեղասպանության արհավիրքի և կանխամտածված ոճրի պարզ ու անմիջական նկարագրություն չէ, այլ վերապրողի ու նրա դստեր խորհրդածությունների ու մեկնաբանությունների մեկ ամբողջական հյուսվածք: Դատելով մոր գլխովն անցածից և նրա բազմահազար բախտակիցների ողիսականից՝ հեղինակը հռետորական հարց է տալիս. «Եթե 1915-ին տեղի ունեցածը ցեղասպանություն չէր, ապա ի՞նչ էր»⁸: Ընդ որում, մոր հուշերը Մարգարիտ Աճեմյանը թղթին է հանձնել ոչ թե վրեժի, այլ «իրողությունն արձանագրելու համար»: Պատանի Եսթերն իր վրեժն առել է ապրելով և սերունդ տալով, շարունակելով իր արյունը: Վերահաս մահվան վտանգներից նրան միշտ էլ փրկել են հույսն ու հավատը: Անշուշտ, վերջին տեղում չեն եղել նաև տոկոսությունն ու հնարամտությունը, փոքր մարմնի մեջ պարփակված հզոր ոգին և ապրելու անհազ ծարավը: Ճիշտ է, անհրաժեշտության դեպքում ճկվել է մարմնով, բայց ոչ հոգով: Նրան արգելել են հայերեն խոսել, սակայն ի գորու չեն եղել կանխելու հայերեն մտածելը:

Տարօրինակ է, թերևս, որ կատարվածից հետո ատելությունը չի պատել նրա հոգուն: Դատեր հարցին՝ «Մայրի՛կ, դու դեռ ատո՞ւմ ես թուրքերին, ինչ նրանք արեցին քո և ընտանիքիդ հետ», նա բացասաբար է պատասխանում: «Թող Աստված նրանց դատի, ոչ՝ ես»⁹, - ասում է նա և խորհուրդ տալիս կյանքը չլցնել ատելությամբ:

«Դռան թակոցը», որ ընթերցվում է մեկ շնչով և չթուլացող հետաքրքրությամբ, շնորհիվ աշխույժ ու պատկերավոր ոճի հատում է փաստագրության սահմանները՝ անցնելով գեղարվեստականի ոլորտը: Դրանով հուշագրական այս գործը ձեռք է բերում ընդհանրական շեշտեր և վերածվում է Եղեռնի թեմայով գեղարվեստական սրտահույզ դրսևորման: Դրանում կան ընթերցողի հիշողության մեջ դաջվող այնպիսի կտորներ, որպիսիք են երկու մանկամարդ աղջիկների թեթև գինովության, Եսթերի ու թուրքական վայրագությունները տեսած Միսգարի փոխադարձ ցավակցության, ինչպես նաև նախա ու ետեղեռնյան Ամասիայի համեմատական նկարագրության տեսարանները: Տպավորիչ է հատկապես զուգահեռ աղոթասացության դրվագը, երբ սենյակի մի կողմում հնչող մահմեդական երգեցողության հնչյունների ներքո, հակառակ կողմում, ձեռքի ափի մեջ տատի նվիրած խաչը սեղմած՝ առ Քրիստոս իր

5 Մարգարիտ Աճեմյան-Սիներթ, Դռան թակոցը, էջ 9:

6 Նույն տեղում, էջ 103:

7 A. J. Toynbee, The Armenian people and the Ottoman government // An Anthology of Historical Writings on the Armenian Massacres of 1915, Beirut, Lebanon, 1985, p. 21.

8 Մարգարիտ Աճեմյան-Սիներթ, նույն տեղում, էջ XII:

9 Նույն տեղում, էջ 9:

աղոթքներն է կամացուկ մրմնջում հայ աղջնակը:

Շարադրանքը լեցուն է գողտրիկ համեմատություններով և այլ արտահայտչամիջոցներով: Այսպես. մոր նիհարությունն ընդգծելու համար Մարգարիտ Աճեմյանը նրա մաշկը համեմատում է ոսկորները պատած մագաղաթի հետ: Կամ երբ հեղինակն ուզում է նկարագրել դեպի Ամերիկա ուղղվող նավի ուղևորներից մի գեղադեմ երիտասարդի, գրում է. «Ավելի կապույտ աչքեր ես չէի տեսել: Դրանք նման էին դեմքի վրա կանգ առած ջրի երկու կաթիլների»¹⁰: Գրքի լեզվական ատաղձի մաս կազմող հայերեն, թուրքերեն և, բնականաբար՝ անգլերեն բառերն ու արտահայտությունները ստեղծված միջավայրին հաղորդում են համապատասխան կոլորիտ: Հարկ է ընդգծել, որ ծնունդով գյումրեցի թարգմանչուհի Մարինե Բազանային հաջողվել է հաղթահարել լեզվական այդ բազմաշերտությունը՝ ընթերցողին կիրթ ու գրագետ հայերենով ներկայացնելով ժամանակի պատկերը:

Վիպակում բազմաթիվ պատկերներ կան, որտեղ իրական վառ գույներով է տրված թուրքի տիպարը: Հիշատակենք պաշտոնաթող սպա Յուսուֆ բեյի տանը հավաքված զինվորականների խրախճանքի նկարագրությունը, որտեղ իրենք՝ թուրքերն են ցինիկորեն և լյտիաբար պատմում իրենց «քաջագործությունների» մասին՝ բացահայտելով սեփական անմարդկային դեմքը: Նրանք իրարից առաջ ընկնելով պատմում են հայ մանչուկներին պղծելու և ամեն մի փոքր խմբի կողմից օրը հիսունից հարյուր հայ սպանելու «հնարագետ» միջոցների մասին: Դիվայինն այն է, որ այդ պատմություններն արվում են անաբող հպարտությամբ և դրանց ուղեկցող ծափահարությունների ներքո:

«Դռան թակոցը» միաժամանակ ահազանգ է բոլոր նրանց համար, ովքեր երբևիցե կհարաբերվեն այդ ազգի ներկայացուցիչների հետ: Այսպես. թուրքական բանակում որպես բարձրաստիճան սպա ծառայող Եսթերի ավագ եղբայրը՝ Հարությունը, քրոջը խորհուրդ է տալիս չվստահել ոչ ոքի: Նրա զգուշացումներն իրականանում են. հայերի հատուկենտ սպանություններն աստիճանաբար վերածվում են զանգվածային կոտորածների, որոնց գոհ է գնում նաև իր եղբայրը: Մինչ այդ Եսթերն արդեն «վայելել էր» սպահովության վերաբերյալ թուրքական խոստման իսկական դառնությունը: Այն տունը, որի տանտիկինը որպես մայր էր ընդունել որբացած հայուհուն, օրեր անց վերածվում է դժբախտությունների որջի: Ու փշրվում է դեռատի հայուհու երազը: «Քանի՞ մայր ես ունեմ,- խորհում է նա,- Առաջինն ինձ ծնած մայրն էր, որին չեմ հիշում: Այնուհետև եկավ Փեփրոնը, ով թոքաբորբից մահացավ: Հաջորդը Վարդուհին էր, որն անհայտացավ մահվան քայլերթի ժամանակ, եւ ապա Խանունը, ով պնդում էր, որ ես իր աղջիկը կլինեմ, բայց փոխարենն իբրև պռնիկ մատուցեց իր ամուսնուն...»¹¹:

Նախաբանում Մարգարիտ Աճեմյանը խոստովանում է, որ իր կյանքը փոխվել է՝ ընթերցելով Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը: Դրանից հետո հեռավոր Նյու Յորքում ծնված մեր հայրենակցուհին ավելի է խորացել իր ազգային ինքնության մեջ, փորձել է թափանցել Հայոց պատմության խորքերը և հասկանալ իր հարազատ ժողովրդի կեցության խորհուրդը: Այս կապակցությամբ կարելի է վերհիշել Վերֆելի վեպի մասին Լևոն-Կարապետ

10 Նույն տեղում, էջ 181:

11 Նույն տեղում, էջ 113:

Պալճյանի՝ երջանկահիշատակ կաթողիկոս Վազգեն Ա վեհափառ հայրապետի հետևյալ խոսքերը. «Վերֆելի վեպը, ինչպես ամեն մեծ գործ, կրնայ իր պակասները կամ նոյնիսկ թերի կողմերը ունենալ գեղարուեստական զանազան տեսակետներէ դիտուած, սակայն ինչ որ վեպ մը մեծ կ'ընէ անոր՝ իրական կեանքը տալու ուժն է: Վեպին աշխարհը դժոխք մըն է, ուր մարդիկ կը տանջուին: Հայը կը փրկուի՝ սակայն մեռնելով. թուրքը մեռնել ալ չի կրնար: Վեպին մէջ հայն ու թուրքը մարդկային հոգիներու երկու բեռներն են: Հեղինակը կրցած է հասնիլ այդ բեռներուն, թափանցած է անոնց էութեան ու տված է անոնց հոգիները իրենց խոր իսկութեամբ: Վերֆելի վեպը աշխարհ մըն է: Աշխարհ մը, որուն մէջէն անցնելով կը զգաս, թէ կարծես կեանք մը ես ապրեցար ու դարձար արեւի մարդ, եւ մանաւանդ՝ արեւի՝ հայ»¹²:

Համոզված ենք, որ «Դռան թակոցը» գրքի անգլերեն և հայերեն հրատարակությունները կօգնեն նոր սերնդին ավելի մոտենալու Հայոց պատմության ծալքերին և անցյալի իրողություններին: Միաժամանակ ուզում ենք նաև հավատալ, որ Մարգարիտ Աճեմյան-Ահներթի «Դռան թակոցը» հուշագրությունը շուտով կթարգմանվի նաև թուրքերեն՝ պատմելով ողջ ճշմարտությունը մեկդարյա վաղեմության այդ նախճիրի մասին: Այս կերպ թուրքերիտասարդությունը ոչ թե թուրք, հայ կամ այլազգի գիտնականների այլ բուն ականատեսի ու վերապրողի շուրթերից կիմանա այդ «մութ ժամանակների» իրական պատմությունը:

2015-ին կլրանա Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը և այնժամ 20-րդ դարակզբի այդ սպանդից մազապուրծ որևէ ականատես հազիվ թե կենդանի մնացած լինի: 1999 թվականին՝ իր կյանքի 99-րդ տարում, Նյու Յորքում վախճանված Եսթեր Սիներաճյանի հուշերն այս առումով ձեռք են բերում իրական մասունքի արժեք:

Լևոն Ե. Լաճիկյան

Summary

HISTORICAL MEMOIRS OF THE ARMENIAN GENOCIDE

Margaret Ajemian Ahnert, *The Knock at the Door: A Journey Through the Darkness of the Armenian Genocide*, Beaufort Books, New York, 2007.

Levon E. Latchikyan

¹² Լևոն-Կարապետ Պալճեան, Սուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելին վեպին մէջ, Բուխարեստ, 1940, էջ 34: